«ՀԱԼԵՊ» ՀԿ-ը և ՀՀ-ում Ճապոնիայի դեսպանատունը միավորում են ջանքերը ի նպաստ սիրիահայերի զբաղվածության խնդրի լուծման

«ՀԱԼԵՊ» հայրենակցական բարեսիրական հասարակական կազմակերպությունը («ՀԱԼԵՊ» ՀԿ-ը) եւ ՀՀ-ում Ճապոնիայի դեսպանատունը մարտի 14-ին ստորագրեցին «Ալեպպո Քուիզին» կենտրոնին տրամադրվող դրամաշնորհի պայմանագիրը՝ Մարդկային անվտանգության «Grassroots» ծրագրերին ուղղված դրամաշնորհային աջակցության շրջանակում:

Արարողությանը ներկա էին ՀՀ-ում Ճապոնիայի արտակարգ և լիազոր դեսպան պարոն Էյջի Տագուչին, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի սոցիալական ապահովության վարչության պետ Ռուզաննա Զաքարյանը, ՄԱԿ-ի Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի հայաստանյան գրասենյակի ղեկավար Քրիստոֆ Բիերվիրթը, Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության «Սիրիացի փախստականների տնտեսական ինտեգրումը Հայաստանում» ծրագրի փորձագետներ Կարինե Սիմոնյանը և Մարտին Հիբշը:

Իր դերով և նշանակությամբ «Ալեպպո Քուիզին» կենտրոնն առաջին սոցիալական ձեռնարկատիրական ծրագիրն է, որի գործունեությունից գոյացած ողջ շահույթը ծառայելու է խոցելի կարգավիճակում գտնվող սիրիահայերի համար նոր աշխատատեղեր հիմնելուն եւ սիրիահայ ընտանիքներին մարդասիրական օգնություն տրամադրելուն:

Նկատի ունենալով սիրիահայերի, մասնավորապես սիրիահայ կանանց շրջանում առկա գործազրկության բարձր մակարդակը եւ հաշվի առնելով նրանց հիմնական կարողություններից խոհարարական հմտությունների տիրապետումը՝ «ՀԱԼԵՊ» ՀԿ-ը հիմնում է «Ալեպպո Քուիզին» արևելյան խոհանոցը, որը նպատակ ունի ստեղծել աշխատատեղեր սիրիահայ կանանց համար ու նպաստել նրանց տնտեսական ու սոցիալական ինտեգրմանը Հայաստանում: Արևելյան խոհանոցի հիմնումը նպատակ ունի նաև խթանել հատուկ կարիքներ ունեցող սիրիահայերի ներգրավումը քաղաքացիական կյանքում:

«ՀՀ-ում Ճապոնիայի դեսպանատունը միանալով «Ալեպպո Քուիզին» կենտրոնի հիմքում ընկած գաղափարախոսությանը՝ այն է ապահովել արժանապատիվ կյանք փախստական դարձած սիրիահայերի համար, իր աջակցությունն է բերում կենտրոնի շինարարական աշխատանքներն իրականացնելու և տարածքը խոհանոցային միջավայրին համապատասխանեցնելու գործում՝ տրամադրելով 40 հազար 635 ԱՄՆ դոլար», - նշում է «ՀԱԼԵՊ» ՀԿ-ի գործադիր տնօրեն Սարգիս Բալխյանը:

«Ես ուրախ եմ, որ Ճապոնիայի կառավարությունը համատեղելով իր ջանքերը միջազգային կառույցների հետ կարողանում է իր ուրույն նպաստն ունենալ Հայաստանում գտնվող փախստականների բարօրության ապահովման գործում: Ալեպպո Քուիզին սոցիալական ձեռնարկատիրական ծրագրին աջակցելը մի նոր էջ է բացում մեր գործունեությունում: Լիահույս եմ, որ այս նոր էջում Ալեպպո Քուիզին կենտրոնը միայն կունենա հաջողություններ», - նշում է ՀՀ-ում Ճապոնիայի արտակարգ և լիազոր դեսպան պարոն Էյջի Տագուչին:

«Ալեպպո Քուիզին» սոցիալական ձեռնարկատիրական ծրագրին իրենց աջակցությունն են բերել նաև ԱՄՆ-ի Տեխաս նահանգի Հյուսթոն քաղաքի Սբ. Գևորգ հայ առաքելական եկեղեցու ծխական խորհուրդը և Գերմանիայի Միջազգային Համագործակցության ընկերությունը:

Մասնավորապես, Սբ. Գևորգ հայ առաքելական եկեղեցու ծխական խորհուրդի՝ հանձին ատենապետ Վրեժ Քոլանդջյանի ու Տեր և տիկին Օսթերպաուր-Դանիէլեանների ջանքերի շնորհիվ հանգանակվել է բավարար գումար, որը թույլ է տվել «ՀԱԼԵՊ» ՀԿ-ին գնել արևելյան խոհանոցի տարածքը: Իսկ Գերմանիայի Միջազգային Համագործակցության Ընկերության կողմից տրամադրված աջակցության շնորհիվ խոհանոցը զինվել է անհրաժեշտ խոհանոցային տեխնիկայով, իսկ նոր ձևավորված աշխատակազմը՝ համապատասխան գիտելիքներով և հմտություններով:

Հիշեցնենք՝ «ՀԱԼԵՊ» ՀԿ-ն իր գործունեության առանցքում ունենալով բարեգործությունը՝ սիրիական հակամարտության հետևանքով Հայաստանում ապաստանած 6100 սիրիահայի տրամադրում է մարդասիրական օգնություն, մշակում և իրականացում է տևական ծրագրեր, որոնք ուղղված են Հայաստանում գտնվող սիրիահայերի առաջնային խնդիրների՝ բնակարանային և զբաղվածության խնդիրների լուծմանը: Կազմակերպության գործունեությունը նաև նպաստում է սիրիահայերի սոցիալ-մշակութային, հոգևոր և ֆիզիկական, կրթական, գիտական զարգացմանը Հայաստանում:

1
18:48 14/03/2018

Lragir.am Նորությունների կայքից.
http://www.lragir.am/index/arm/0/society/view/171955